

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2023թ.

N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիրի 27-րդ փողոցն անվանակոչել հայ բանաստեղծուհի, թարգմանչուհի Մարո Մարգարյանի անվամբ՝ «Մարո Մարգարյան փողոց»:
2. Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանակոչել բանաստեղծուհի, հասարակական գործիչ Արմենուհի Տիգրանյանի անվամբ՝ «Արմենուհի Տիգրանյան փողոց»:
3. Երևան քաղաքի Արաբկիրի 53-րդ փողոցն անվանակոչել հայ արձակագիր, բանաստեղծուհի Էլեն Բյուզանդի անվամբ՝ «Էլեն Բյուզանդի փողոց»:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ բանաստեղծուհի **Մարո Մարգարյանը** ծնվել է 1915թ. դեկտեմբերի 22-ին Շուլավերում (այժմ՝ Շահումյան ավան՝ Վրաստանի Մառնեուլի շրջանում):

Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում: 1938թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Այնուհետև սովորել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ասպիրանտուրայում: Նրա առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1935թ.: 1967-1984թթ. աշխատել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում:

Մարո Մարգարյանի բանաստեղծությունների հիմնական թեման հայրենիքն է, սերը, մարդկային փոխհարաբերությունները: Նրա բանաստեղծությունները թարգմանվել և առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն լեզվով: «Ժողովուրդների բարեկամության շքանշանակիր է, ՀԽՍՀ պետական մրցանակի և Ավետիք Իսահակյանի անվան մրցանակի դափնեկիր:

Մարո Մարգարյանը մահացել է 1999թ. Երևանում, թաղված է Բյուրականում:

Բանաստեղծուհի **Արմենուհի Տիգրանյանը** ծնվել է 1888թ.: Սովորել է Ալեքսանդրապոլում՝ աղջիկների ռուսական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայում:

Վաղ տարիքից գրել է բանաստեղծություններ: 1905թ.-ից նրա բանաստեղծությունները հրատարակվել են տարբեր պարբերականներում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է Հայ օրիորդաց միության նախագահը: 1914թ. Թիֆլիսում Մենուհի գրական կեղծանվամբ լույս են տեսել նրա բանաստեղծությունների ժողովածուն և «Բեշտաուն» լեզենդը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց որոշ ժամանակ անց մեկնել է Փարիզ: 1923թ. մեկնել է ԱՄՆ, որտեղ էլ շարունակել է զբաղվել գրական գործունեությամբ: Նրա աշխատությունների մեծ մասը հրատարակվել է ԱՄՆ-ում լույս տեսնող գրական-գեղարվեստական «Հայրենիք» օրաթերթում: Գրականությունից բացի Արմենուհի Տիգրանյանը զբաղվել է նաև հասարակական աշխատանքով. մոտ երեսուն տարի շարունակ նա հայոց լեզու և գրականություն է տարածել ամերիկահայ նոր սերդի շրջանում, եղել է ուսուցչուհի Նյու Յորքի, Նյու Ջերսիի, Լոնգ Այլենդի հայկական դպրոցներում: Ամուսնու հետ միասին կազմել է հայոց լեզվի «Հրազդան» դասագրքերը՝ չորս տարիների դասընթացով, դասագրքերն ունեցել են մի քանի հրատարակություն:

Նրա հասարակական գործունեության դաշտերից մեկն էլ եղել է Կարմիր Խաչ-Հայ օգնության միությունը, որին իր նպաստն է բերել ոչ միայն իբրև Նյու Յորքի Վաշինգտոն-Հայցի մասնաճյուղի անդամ, այլ հաճախ նաև որպես ՀՕՄ կենտրոնական վարչության անդամ, երբեմն նաև՝ ատենապետուհի:

Արմենուիի Տիգրանյանը մահացել է 1962թ. դեկտեմբերի 9-ին:

Հայ արձակագիր **Էլեն Բյուզանդը** /իսկական անուն, ազգանունը՝ Եղիսաբեթ Ստամբուլյան/ ծնվել է 1895թ. ապրիլի 3-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Նրա ծնվելուց հետո ընտանիքը տեղափոխվել է Կարս և Էլենն իր ողջ մանկությունն անցկացրել է այնտեղ:

1910-ական թվականներին տեղի հայկական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Էլեն Բյուզանդը կրթությունը շարունակել է Թիֆլիսի Հովնանյան-Մարիամյան օրիորդաց վարժարանում:

1916թ. ավարտել է Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցն ու կրթությունը շարունակելու նպատակով տեղափոխվել է Դոնի Ռոստով, որտեղ սկսել է իրավաբանության դասընթացների հաճախել Վարշավայի համալսարանում, որն Առաջին համաշխարհային պատերազմի օրերին տեղափոխվել էր Դոնի Ռոստով: Այդտեղ նա աշխատել է նաև հայագրի իրավաբան Գրիգոր Չախյանի գրասենյակում, նրա երեխաներին հայերեն է դասավանդել: Այդ տարիներին անդամակցել է Հայ հեղափոխական դաշնակցությանը:

1918թ.՝ Հոկտեմբերյան հեղափոխության սկսելուն պես վերադարձել է Հայաստան և մասնակցել Սարդարապատի ճակատամարտին: Աշխատել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի գրասենյակում՝ որպես գործավար: Հայաստանի խորհրդայնացումից հետո ՀՅԴ բազմաթիվ գործիչների պես բանտարկվել է Չեկայի, ապա՝ Կենտրոնական բանտում: Փետրվարյան ապստամբությունից հետո ազատվել է և ուղարկվել Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) ճակատ, որտեղ մնացել է մինչև 1921թ. ապրիլը: Ամուսնանալուց հետո, տեղափոխվել է Իրան, ապա՝ Ֆրանսիա: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Էլենը կամավոր է եղել Արֆորվիում: Հետագայում Արֆորվիլի քաղաքապետարանը նրան պարգևատրել է հատուկ մեդալով՝ պատերազմի ժամանակ Ֆրանսիային աջակցելու համար:

Զբաղվել է հասարակական-կուսակցական և գրական գործունեությամբ: Եղել է Ֆրանսիայի Հայ օգնության միության ղեկավար:

1944թ. Ֆրանսիայի «Արաքս» հրատարակչությունը հրատարակել է Էլեն Բյուզանդի առաջին գիրքը՝ «Պահակը» պատմվածքների ժողովածուն:

1960թ. հայ համայնքը Էլեն Բյուզանդին հրավիրել է Իրան՝ դասախոսություններ կարդալու: Երեք ամիս տևած շրջագայության ընթացքում իրանահայերը որոշել են հրատարակել նրա նովելները: 1960-ական թվականների կեսերին Իրանի «Ալիք» հրատարակչությունը տպագրել է Էլեն Բյուզանդի հիմնական գրական գործերը՝ «Նոր կինը» և «Կարսը և եղբայր Արշոն» նովելները: Նրա որոշ գործեր հրատարակվել են նաև Բեյրութում: «Հայուհիները Երևանի Չեկայի բանտում» հուշագրությունը 1965 թվականին տպագրվել է սփյուռքահայ մամուլում:

Էլեն Բյուզանդի ստեղծագործություններից են «Նոր կին», «Կարսը և Արշոն ախպեր» վիպակները, «Ուխտագնացություն դեպի Վենետիկ», «Վահագնի վիպակները», «Պահակը» մանկական պատմվածքները և այլն:

Կյանքի վերջին տարիներին Էլեն Բյուզանդն ակտիվ գործունեություն է ծավալել Լոս Անջելեսի հայ համայնքում: Ժամանակ առ ժամանակ նա հողվածներ է գրել Բոստոնի «Հայրենիք» ամսագրի համար: 1981թ. Լոս Անջելեսում հրատարակվել է «Զրույց Կարսի մասին» պոեմը, իսկ նրա վերջին գործը՝ «Սարէ Բոբչէ» պոեմը նվիրված է հայ ֆիդայիներին:

Էլեն Բյուզանդը մահացել է 1970 թ. հունվարի 14-ին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Արաբկիրի 27-րդ փողոցն անվանակոչել հայ բանաստեղծուհի, թարգմանչուհի Մարո Մարգարյանի անվամբ՝ «Մարո Մարգարյան փողոց», Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանակոչել բանաստեղծուհի, հասարակական գործիչ Արմենուհի Տիգրանյանի անվամբ՝ «Արմենուհի Տիգրանյան փողոց», Երևան քաղաքի Արաբկիրի 53-րդ փողոցն անվանակոչել հայ արձակագիր, բանաստեղծուհի Էլեն Բյուզանդի անվամբ՝ «Էլեն Բյուզանդի փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ**

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ**

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ